

# **ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների մասնագիտական տոնի առթիվ**

08.10.2021

2014 թվականի մայիսի 19-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց օրենք՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», որն ուժի մեջ մտավ 2014 թվականի հունիսի 28-ին և լիարժեք սկսեց գործել հոկտեմբերի 8-ից: Այդ օրն էլ սահմանվեց որպես քննչական կոմիտեի ծառայողի մասնագիտական տոն: Այդ կապակցությամբ ի սրտե շնորհավորում եմ համակարգում ծառայող բոլոր նվիրյալներին: Քննչական մարմինները մինչդեռատական վարույթի շարժիչ ուժն են, իսկ Քննչական կոմիտեի դերակատարումը՝ առաջնայիններից մեկը: Վստահ եմ, որ Քննչական կոմիտեի ծառայողները լիովին գիտակցում են իրենց առաքելության կարևորությունն ու նշանակությունը և մասնագիտական փորձով, արհեստավարժությամբ ու ընդգծված նվիրումով կշարունակեն պատվով իրականացնել իրենց գործունեությունը՝ էապես նպաստելով երկրի իրավապահ մարմինների հանդեպ հանրային վստահության աստիճանի բարձրացմանը: Մեկ անգամ ևս շնորհավորում եմ Քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ, մաղթում տոկունություն և հաջողություն չափազանց պատասխանատու ու միաժամանակ հետաքրքիր աշխատանքում: ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան